Կարճ ՔԱՂՎԱԾՔ բնապահպանության մասով

Հավելված
ՀՀ կառավարության 2017թ.-ի
հունիսի 19-ի N646-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության
Կառավարության 2017-2022թթ. ծրագիր

4.4. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Շրջակա միջավայրի պահպանության նորարարական տնտեսական և ֆինանսական մեխանիզմների ներդրման ուղղությամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2017 թվականի ավարտը մշակել կանաչ տնտեսության սկզբունքների ներդրման հայեցակարգը.

2) մինչև 2018 թվականի ավարտն ուսումնասիրել և բանակցել միջազգային կառույցների հետ՝ ,Բնապահպանական միջոցառումներ՝ երկրի արտաքին պարտքի դիմացե ֆինանսավորման մեխանիզմի ներդրման ուղղությամբ.

3) 2018-2022 թվականների ընթացքում իրագործել անհրաժեշտ քայլեր՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և կոնվենցիաներով նախատեսված տեխնիկական և ֆինանսական օժանդակության բոլոր խողովակներն ու մեխանիզմները, այդ թվում՝ 2017 թվականին՝ ,Հայաստանի Հանրապետության կառավարության և Կանաչ կլիմայի հիմնադրամի միջև Կանաչ կլիմայի հիմնադրամի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասինե համաձայնագրի ստորագրում.

4) 2019-2022 թվականների ընթացքում ստեղծել և գործադրել ,Պետություն-մասնավոր հատվածե համագործակցության վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ, բնապահպանական, այդ թվում՝ համայնքային հիմնադրամների, ապահովագրական, ինչպես նաև քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամներե: